

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԻՄԻԱ

Հ. Հ. Դարբինյան, Հ. Գ. Խաչատրյան. Ալիլթիոմիզանյութի հետ ռենիում(VII)-ի փոխազդեցության ուսումնասիրումը սպեկտրալուսաչափական եղանակով էջ. 3–7

Ուսումնասիրվել են $Re(V)$ -ի ստացման և վերջինիս ալիլթիոմիզանյութի (ԱԹՄ) հետ հաջորդող փոխազդեցության հնարավորությունները: Փոխազդեցությունից ստացված նյութը լուսակլանման առավելագույն արժեք ունի $\lambda_{max}=365$ նմ ալիլի երկարության դեպքում: Բացահայտվել են քիմիական ռեակցիայի ընթացքի օպտիմալ հնարավորությունները՝ վերականգնիչի և ռեագենտի կոնցենտրացիաները, միջավայրի թթվայնությունը, ինչպես նաև առաջացած միացության գունավորման զարգացման ժամանակը և ժամանակից կախված կայունությունը: Հազեցման և իզոմոլային սերիաների եղանակներով հաստատվել է, որ փոխազդող բաղադրիչների հարաբերությունը՝ $Re(VII) : ԱԹՄ = 1:3$: Ցույց է տրվել ԱԹՄ-ի կիրառման հնարավորությունը՝ որպես նոր ռեագենտ $Re(VII)$ -ի սպեկտրալուսաչափական եղանակով որոշման համար:

Ի. Լ. Ալեքսանյան, Լ. Պ. Համբարձումյան. 2-Մեթիլ-4-քլոր(մերկապտո)-6(8)-մեթօքսի-խինոլինների փոխազդեցությունը S-նուկլեոֆիլների և բենզիլքլորիդների հետ էջ. 8–12

2-Մեթիլ-4-քլոր-6(8)-մեթօքսիխինոլինների և S-նուկլեոֆիլների, ինչպես նաև 2-մեթիլ-4-մերկապտո-8-մեթօքսիխինոլինների և արոմատիկ բենզիլքլորիդների փոխազդեցության արդյունքում սինթեզվել են տեղակլված բիս[4-(խինոլին-4-իլ)ֆենիլ]սուլֆիդներ, 4,4'-բիս[խինոլին-4-իլսուլֆանիլմեթիլ]բիֆենիլներ, 4,4'-[օքսիբիս(բենզիլ-4,1-դիլիսուլֆանոլիլ)]բիս(2-մեթիլխինոլիններ), 1,4-բիս[խինոլին-4-իլսուլֆանիլ]բենզոլներ և 4-(1,3-բենզոքսիազոլ-2-իլսուլֆանիլ)խինոլիններ:

Ա. Ջ. Համբարձումյան. Ցեյլուրզի միաբյուրեղների, միաշերտերի պատրաստումը սիլիցիումային թիթեղի մակերևույթին Լանգմուիր-Բլոջետի եղանակով էջ. 13–18

Մանրամասնորեն ներկայացված է ցեյլուրզի միաբյուրեղների, միաշերտերի պատրաստումը սիլիցիումային թիթեղի մակերևույթին Լանգմուիր-Բլոջետի եղանակով: Ցեյլուրզի միաշերտերի պատրաստման համար

Լանգմյուր–Բլոջետի փոխանցումը պինդ մակերևույթին կատարվել է դիօկտադեցիլդիմեթիլամոնիումի բրոմիդ–ցելյուլոզի միաբյուրեղներ երկշերտի անընդհատ սեղմման և սինուսիդային սեղմման-ընդարձակման պայմաններում: Ցելյուլոզի միաշերտ միաբյուրեղների վերլուծությունն՝ ատոմային ուժի մանրադիտման եղանակը ցույց է տալիս, որ միաշերտն ավելի խտացված է, երբ փոխանցումն իրականացվում է երկշերտի սինուսիդային սեղմման-ընդարձակման պայմաններում:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Ժ. Հարությունյան, Շ. Հ. Հարությունյան, Ս. Գ. Նանագյուլյան. Որոշ տեղեկություններ խաղողի վազի օիդիում և միլդյու հիվանդություններով վարակված խաղողից պատրաստված կոնյակի գինեցիության որակական կազմի վերաբերյալ էջ. 19–23

Հետազոտվել են օիդիում և միլդյու հիվանդություններով վարակված այգիների Ռ-կաժիթելի, Կանգուն և Մեղրաբույր խաղողի սորտերից ստացված կոնյակի գինեցիությունը: Արդյունքում, թե՛ զգալորոշման զնահատականը, թե՛ մանրէաբանական ցուցիչները բացահայտում են, որ կոնյակի բարձորակ արտադրանքի ստացման համար անհրաժեշտ է բացառել հիվանդություններով վարակված խաղողի առկայությունը, քանի որ այն կորցնում է իր տեխնոլոգիական արժեքը, այսինքն՝ պիտանի չի կոնյակի արտադրությունում օգտագործելու համար: Ստացված գինեցիությունը լավագույն դեպքում կարող է օգտագործվել խաղողի օղու պատրաստման արտադրությունում:

Մ. Ս. Միքայելյան, ԾԲՀ ԷՄՃ-ի ներգործությունն առնետների արյան պլազմայի մակերևութային լարվածության վրա էջ. 24–28

Հետազոտվել է ծայրահեղ բարձր հաճախականությունների էլեկտրամագնիսական ճառագայթման (ԾԲՀ ԷՄՃ) ազդեցությունն առնետների արյան պլազմայի մակերևութային լարվածության գործակցի արժեքների վրա: Ճառագայթահարումն իրականացվել է երկու եղանակով. ԾԲՀ ԷՄ ճառագայթման են ենթարկվել առնետների արյան պլազման և առնետները: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ ԾԲՀ ԷՄ ճառագայթումը ներգործում է ուսումնասիրվող պարամետրի աճի վրա: Կենդանիների ճառագայթահարման դեպքում դիտվում է կուտակային էֆեկտ, իսկ առնետների արյան պլազմայի ճառագայթահարման դեպքում մակերևութային լարվածության գործակցի արժեքի փոփոխությունը՝ ուղիղ համեմատական է ճառագայթահարման տևողությանը:

Հ. Տ. Աբրահամյան, Ս. Մ. Մինասյան. Ուսանողների գործառական վիճակի կարգավորումն ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում էջ. 29–34

Հետազոտվել են ուսանողների սրտի ռիթմի ցուցանիշների փոփոխություններն օրական ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում, ինչպես նաև դրանց շտկման հնարավորությունը դասական երաժշտության միջոցով: Հաստատվել է, որ ուսումնական ծանրաբեռնվածությունը հանգեց-

նում է սինպաթիկ-պարասինպաթիկ հավասարակշռության խանգարմանը, ինչն ուղեկցվում է պարասինպաթիկ մեխանիզմների ակտիվության մեծացմամբ և հոգնածության զարգացմամբ: Դասական երաժշտությունը չեզոքացնում է օրական ուսումնական ծանրաբեռնվածության բացասական ազդեցությունն ուսանողների օրգանիզմի զորձառական համակարգերի վրա, մեծացնում աշխատունակությունը, նպաստում հարմարողական-փոխհատուցողական մեխանիզմների ակտիվացմանը՝ հանգեցնելով “Մոցարտի էֆեկտի” դրսևորմանը:

Մ. Ա. Մելքոնյան, Ն. Ս. Ավետիսյան, Գ. Գ. Օզանեզովա, Մ. Բ. Չիբչյան, Ա. Մ. Հովհաննիսյան, Ն. Ա. Հովհաննիսյան. Նոր արհեստական ամինաթթուները և պեպտիդներն որպես բակտերիաների աճի արգելակիչներ էջ. 35–39

Հետազոտվել է նոր արհեստական ամինաթթուների ազդեցությունը բակտերիաների վրա, որոնք ընդգրկվում են թեստ-կուլտուրաների հավաքածուի մեջ: Բացահայտվել են միացություններ, որոնք արգելակել են թեստ-հավաքածուի բոլոր շտամների աճը: Որոշ միացություններ *E.coli*-ի նկատմամբ ցուցաբերում էին հակաբակտերիական ակտիվություն, որոնք կայուն են նաև հակաբիոտիկների նկատմամբ, մնացածները ցուցաբերում էին յուրահատուկ ազդեցություն առանձին տեսակների վրա:

Ա. Ա. Ավետիսյան, Ե. Բ. Դալյան. CoTOEPyP4 պորֆիրինի A-ԴՆԹ-ի փոխազդեցության թերմոդինամիկան էջ. 40–45

ՈՒՄ, տեսանելի սպեկտրալուսաչափության և շրջանային դիսպրիզմի եղանակներով ուսումնասիրվել է Co-պարունակող մեզո-տետրա(4N-օքսի-էթիլպիրիդիլ) պորֆիրինի (CoTOEPyP4) փոխազդեցության առանձնահատկությունները B- և A-ԴՆԹ-ի հետ: Կլամման իզոթերմերից հաշվարկվել են կապման հաստատունը (K_b) և տարածաչափական գործակիցը (n): K_b -ի արժեքների միջոցով հաշվարկվել են Գիբսի ազատ էներգիան, կապման էնթալպիան և էնտրոպիան: Ցույց է տրված, որ CoTOEPyP4 պորֆիրինը B- և A-ԴՆԹ-ի հետ փոխազդում է միայն արտաքին ակոսային կապակցման միջոցով:

Ն. Հ. Ներսիսյան, Ա. Ս. Հակոբյան, Լ. Ա. Միմոնյան, Ա. Ռ. Միսակյան, Զ. Ա. Կարալյան, Ե. Մ. Կարալովա. Խոզերի աֆրիկյան ժանտախտն որպես էրիթրոպոեզի խանգարումների խթանիչ էջ. 46–50

Աշխատանքում ստուգվել է ավելի վաղ արված ենթադրությունն այն մասին, որ խոզերի աֆրիկյան ժանտախտը (ԽԱԺ) զգալի փոփոխություններ է առաջացնում արյան բջիջներում: Հետազոտվել են փոփոխությունները ծայրամասային արյան կարմիր բջիջների պոպուլյացիայում փորձարարական սուր ԽԱԺ-ի ժամանակ: Օպտիկական խոշորացույցի օգնությամբ բացահայտվել են էրիթրոպոեզի խանգարման բոլոր հատկանիշները: Վարակի հենց սկզբից վարակված խոզերի ծայրամասային արյան մեջ հայտնաբերվել են արյան կարմիր բջիջների վաղ ձևերը, օրինակ՝ ռուբրիբլաստները: Էրիտրոիդի բոլոր վաղ բջիջների մոտ 60%-ն երկմիջուկ էին:

ՀԱՂՈՐԳՈՒՄՆԵՐ

Շ. Լ. Մարարյան, Լ. Ա. Մարգարյան, Գ. Պ. Փիրումյան. Cr, As, Cd, Pb տարրերի պարունակության ուսումնասիրությունը ՀՀ որոշ գետերում էջ. 51–54

Ուսումնասիրվել է Cr, As, Cd, Pb տարրերի պարունակությունը Գեբեղ, Գարգառ, Շնող, Ախթալա, Ողջի, Արծվանիկ գետերի ջրերի նմուշներում 2008–2013թթ. ընթացքում:

Ի. Ն. Միրեկանյան. Բիուրեսի և կադմիումի խելաթային կոմպլեքսի որոշ ֆիզիկաքիմիական պարամետրերը էջ. 55–57

Հետազոտվել է խելատային կոմպլեքսի էլեկտրահաղորդականությունը կադմիումի հետ: Համարժեք էլեկտրահաղորդականության թվային արժեքներից որոշվել են խելատային կոմպլեքսի ջրային լուծույթի դիսոցման հաստատունն ու աստիճանը: $\lg K$ -ի $1/T$ -ից կախվածության միջոցով որոշվել են հետազոտվող խելատային կոմպլեքսի դիսոցման էնթալպիայի գործոնը և ջերմային էֆեկտը:

Գ. Ե. Բաղդասարյան. Էնդոինուլազի (EC 3.2.1.7) մաքրման նոր եղանակ էջ. 58–61

Առաջին անգամ առաջարկվել է էնդոինուլազի մաքրման եղանակ խատուտիկից: Էնդոինուլազը անջատվել է *Taraxacum officinale*-ի արմատային բջիջներից, լուծվել ջրում, նստեցվել է pH 6.2-ում, այնուհետև նստվածքը մշակվել է բութանոլով: Մաքրումը կատարվել է հելֆիլտրացիայով, կիրառելով օրգանական լուծիչներ (բութանոլ և ագետոն) և G-150 սեֆադեքս, չափերը՝ 2.0×160 սմ²: Ֆերմենտը մաքրվել է 71.3 անգամ, մոլեկուլային զանգվածը կազմել է 176 կԴա: